ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Շողիկ Մանասերյանի ներկայացուցիչ՝

Ա. Գալստյանի (լիազորագիր, տրված՝ 06.10.2019թ.)

քննելով «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հաշվապահական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Շողիկ Մանասերյանի կողմից 03.10.2019թ. ներկայացված (03.10.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/70 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>Ա/Ձ Շողիկ Մանասերյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Ա/Ձ Շողիկ Մանասերյանը 03.10.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 2 որոշմամբ հայտարարվել է «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով հաշվապահական ծառայությունների ձեռքբերման արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը:

Ընթացակարգի հրավերը կազմվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կարգի խախտմամբ: Մասնավորապես.

Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ մասի 2-րդ պարբերությամբ Պատվիրատուն նմանատիպ է համարում հիմնադրամների համար հաշվապահական և/կամ աուդիտորական ծառայությունների մատուցված լինելը, որը խտրական, ոչ համաչափ պայմաններ է ստեղծում հաշվապահական ծառայությունների մատուցող ընկերությունների համար նեղացնելով մասնակիցների շրջանակը:

Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի բ/ մասով, 3-րդ և 4-րդ ենթակետերով Պատվիրատուն պահանջում է համապատասխանաբար «Մասնագիտական փորձառություն», «ֆինանսական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ»:

Ա/Ձ Շողիկ Մանասերյանը համաձայն չէ կազմված հրավերի պահանջներին, քանի որ Պատվիրատուի տվյալ գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 3000.0 հազար դրամ, իսկ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը հաստատել և հրապարակել է գնումների բազային միավորի տասնապատիկը գերազանցող գնման առարկայի գնման համար նախատեսված հրավեր:

Ա/Ձ Շողիկ Մանասերյանը բողոքարկել է հրապարակված հրավերը և խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով

գնահատող հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 3 որոշմամբ հաստատված հրավերի տեքստը համարել կազմված և հաստատված «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-N որոշման պահանջների խախտմամբ և պարտավորեցնել «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովին կատարել համապատասխան փոփոխություններ հրավերի բովանդակության մեջ՝ համաձայնեցնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հետ:

Բողոքաբերը գտնում է, որ Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ մասի 2-րդ պարբերությամբ Պատվիրատուն խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ ստեղծելով ոչ համաչափ և խտրական պայմաններ հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունների համար, որով նեղացնում է մասնակիցների շրջանակը և թուլացնում մրցակցությունը, Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի բ/ մասով խախտել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 61-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, Հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետի ա/ մասով խախտել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-N որոշման 64-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Ա/Ձ Շողիկ Մանասերյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.10.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.10.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ:
2. www.gnumner.am տեղեկագրում բացակայում է «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի ներառմամբ Պատվիրատուի 2019 թվականի գնումների պլանը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Շողիկ Մանասերյանի կողմից 03.10.2019թ. ներկայացված բողոքը, «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի 2019 թվականի գնումների պլանի վերաբերյալ www.gnumner.am տեղեկագրում առկա տեղեկատվությունը, «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային

օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

01.10.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կարիքների համար «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է www.gnumner.am տեղեկագրում հրապարակված գնումների պլանների վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կարիքների համար հաշվապահական ծառայությունների ներառմամբ գնումների պլան հրապարկված չէ տեղեկագրում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 07.10.2019թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/16459-2019 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել www.gnumner.am կայքում հրապարակված «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի 2019 թվականի գնումների պլանը

(ներառյալ փոփոխություններ) և պլանի՝ վերոհիշյալ կայքում հրապարակման համապատասխան հղումը:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուի կողմից որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից չի տրամադրվել հայցվող տեղեկատվությունը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն առաջնորդվել է www.gnumner.am կայքում առկա տեղեկատվությամբ: Մասնավորապես՝ նշված տեղեկագրում առկա է միայն 23.05.2019թ. հրապարակված Պատվիրատուի գնումների պլանի փոփոխություն, որում սակայն ներառված չէ «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնման առարկա հանդիսացող հաշվապահական ծառայությունները:

Այսպիսով՝ Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, Օրենքի և Կարգի պահանջների խախտմամբ, քանի որ բացակայում է սահմանված կարգով տեղեկագրում հրապարակված գնումների պլանը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված՝ Ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջին, ապա այն ենթակա է մերժման, քանի որ վերը նշված իրավական նորմերի խախտման արձանագրման պայմաններում Ընթացակարգն ամբողջությամբ պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Շողիկ Մանասերյանի կողմից 03.10.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. Բողոքը՝ «ԱԱԳԼ-ՀՄԱ-ԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հրավերում փոփոխություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**